ՀՏԴ 796.01.57 DOI: 10.53068/25792997-2025.1.14-117

ՆՈՐԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ա.Գ. Ստեփանյան, Ս. Գ. Խաչատրյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Նորարարություն, նախադպրոցական կրթություն, ֆիզիկական դաստիարակություն, մանկավարժ, ֆիզկուլտուրայի պարապմունք:

Հետազոտության արդիականություն: Հայաստանի սոցիալ-տնտեսական լայնածավալ փոփոխությունների ընթացքում, երբ տեղի է ունենում հասարակական հարաբերությունների ողջ համակարգի վերագնահատում, էական փոփոխությունների է ենթարկվում նաև կրթական համակարգը: Ներկա ժամանակաշրջանի բնորոշ առանձնահատկությունը կրթության մեջ տեղի ունեցող նորարարական գործընթացների ակտիվացումն է: Տեղի է ունենում կրթական հարացույցի փոփոխություն, առաջարկվում է կրթության այլ բովանդակություն, այլ մոտեցումներ, մանկավարժական այլ մտածելակերպ [2, 4]: Այս համատեքստում փոխվում է մանկավարժի կարգավիճակը, փոխվում են մանկավարժական-մասնագիտական կոմպետենցիաներին առաջադրվող պահանջները, ավելանում են կրթական և ուսումնադաստիարակչական գործընթացի որակին ներկայացվող պահանջները [6, 9]:

Տեղի ունեցող առանցքային փոփոխությունները պահանջում են լուրջ բարեփոխումներ իրականացնել կրթական բոլոր օղակների գործունեության համակարգման և բովանդակության մեջ, նույնիսկ առաջին հերթին՝ նախադպրոցական տարիքի երեխաների համար: Ուստի, նախադպրոցական կրթությունը ձեռք է բերում սոցիալական կարևոր ինստիտուտի գործառույթ [5]:

Նախադպրոցականների ընդհանուր կրթության համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի ֆիզիկական դաստիարակությունը, որի կատարելագործումը մեծ մասամբ որոշվում է երեխաների ֆիզիկական պատրաստվածության մեթոդների գիտական հիմնավորվածության մակարդակով և ֆիզիկական դաստիարակության նորարարական տեխնոլոգիաների ներդրմամբ:

Նորարարական գործընթացները պետք է օրինաչափություն լինեն

նախադպրոցական կրթության զարգացման մեջ և կրեն էական բնույթ, ունենան կայուն հիմքեր, ուղեկցվեն գործունեության ուղղվածության և դաստիարակների մտածողության փոփոխություններով, որոնք առաջացնում են ֆիզիկական դաստիարակության ավանդական համակարգի անցումը՝ նորարականի [3, 8]:

Առկա խնդիրներին զուգահեռ, ոլորտի հետազոտողները նշում են, որ նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում ներկայումս կիրառվող ավանդական մեթոդիկաները ընդունակ չեն լիարժեք լրացնել աճող օրգանիզմի շարժողական ակտիվության անհրաժեշտ ծավալը [1, 7]:

Ըստ մեզ՝ նախադպրոցականների ֆիզիկական դաստիարկության գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է նորարարությունների նպատակաուղղված մշակման, ներդրման, յուրացման և տարածման գործընթացների հետ, որտեղ իր ուրույն դերն ունի ֆիզիկակական դաստիարակության մանկավարժը, ում մասնագիտական գործունեության մեջ առանձնահատուկ դեր է գրավում նախաձեռնողականությունը, հնարամտությունը, ստեղծագործական մոտեցումը և մանկավարժական գործընթացում փոփոխություններ կատարելու ձգտումը:

Այսպիսով՝ ֆիզիկական դաստիարակության մանկավարժի կարևոր գործառույթներից է աջակցել երեխային՝ ֆիզիկական վարժություններ կատարելիս, խաղային գործունեությունում, մատչելի դարձնել առաջացող խնդիրների լուծումը, օգնել յուրացնելու բազմատեսակ առաջադրանքները:

Այս առնչությամբ համաշխարհային կրթական համակարգում ստեղծվել և սկսել է օգտագործվել նոր տերմին՝ **ֆասիլիտատոր**, որը նպաստում, աջակցում, խրախուսում և ակտիվացնում է երեխաներին, օգնում է սովորել նրանց, բոլորին ցուցաբերում է հավասար վերաբերմունք, աշխատանքում ներառում է բոլոր երեխաներին [10]:

Այսպիսով՝ նախադպրոցականների ֆիզիկական դաստիարկության գործընթացում նորարարությունները սահմանում են մանկավարժական պրակտիկայում օգտագործվող նոր մեթոդներ, ձևեր, միջոցներ, տեխնոլոգիաներ, որոնք կողմնորոշված են դեպի երեխայի անհատականությունը և նրա կարողությունների զարգացումը: Այս ամենի հիմնական դերը պատկանում է ֆիզիկական դաստիարկության մանկավարժին:

Հետազոտության նպատակն է՝ հետազոտել նորարարությունների իրա-

կանացման անհրաժեշտությունը նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Բացահայտել նախադպրոցական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության գործընթացում նորարարական տեխնոլոգիաների զարգացման միտումները:

2. Բացորոշել ֆիզիկական դաստիարակության մանկավարժների վերաբերմունքը մասնագիտական գործունեությունում նորարարությունների կիրառման վերաբերյալ:

Աշխատանքում օգտագործվել են հետազոտության հետևյալ **մեթոդները՝**

1. **Տեսական** (հետազոտական թեմայի վերաբերյալ գրականության վերլուծություն, ուսումնասիրություն, ընդհանրացում, աշխատանքային փորձի ընդհանրացում),

2. **Էմպիրիկ** (սոցիոլոգիական հարցում, մանկավարժական դիտում, զրույց):

Հետազոտության կազմակերպումը:

Նախադպրոցական կրթական հաստատությունների ֆիզիկական դաստիարակության գործընթացում նորարարությունների կիրառման վերաբերյալ ֆիզիկական դաստիարակության մասնագետների վերաբերմունքի պարզաբանման, ինչպես նաև այդ գործընթացի ներդրմանը խոչընդոտող գործոնների բացահայտման նպատակով մեր կողմից կատարվել է սոցիոլոգիական հարցում, որի համար կազմվել է 9 հարցից հատուկ հարցաթերթիկ: Հարցերն ունեին պատասխանի այլընտրանքային տարբերակներ և հարցվողներին հնարավորություն էին տալիս արտահայտելու իրենց տեսակետը: Սոցիոլոգիական հարցումն իրականացվել է Երևանի և Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 21 պետական հիմունքներով մանկապարտեզներում: Հարցմանը մասնակցել է ընդհանուր առմամբ 144 մանկավարժ: Նրանց մանկավարժական միջին ստաժը 19 տարի էր: Նրանցից ոչ մեկը չուներ բարձրագույն ֆիզկուլտուրային կրթություն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հարցման արդյունքում պարզվեց, որ նրանց մեծամասնությունն (86,5 տոկոս) անհրաժեշտություն է համարում նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում իրականացնել փոփոխություններ (ներդնել նորարություններ): Նման գործընթացին դեմ են արտահայտվել հարցվողների 6,7 տոկոսը, և ճիշտ այդքան դաստիարակներ չեն կողմնորոշվել իրենց պատասխաններում: Հաջորդ հարցի արդյունքում պարզվեց, որ մանկավարժների 37,9 տոկոսը նպատակահարմար են գտնում փոփոխության ենթարկվի նախադպրոցականների ֆիզիկական

կուլտուրայի կրթական բաղադրիչը, իսկ 62,1 տոկոսը՝ շարժողական կարողություններ ձևավորման ոլորտը:

Բացահայտվեց, որ հարցմանը մասնակցած մանկավարժներից շատերը վերջին տարիներին մասնակցել են մասնագիտական վերապատրաստումներին, սակայն նրանց բացարձակ մեծամասնությունը նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում որևէ ինովացիոն մոտեցում չի կիրառել:

Իսկ այն մանկավարժները, որոնք այս կամ այն չափով կիրառել էին ինովացիոն մոտեցումներ, պարզվեց, որ դրանք հիմնականում ուղղված էին հետևյալ խնդիրների լուծմանը (տրամագիր 1):



Տրամագիր 1. *Նորարական դասերի ընթացքում լուծվող խնդիրներն ըստ դաստիարակների՝ տոկոսներով*

Այս հարցի վերլուծման շրջանակներում պարզվում է, որ ֆիզիկական դաստիարակության ոլորտում նորարարություններ իրականացրած դաստիարակների մեծամասնությունը (61,9 տոկոս) բավարարված են իրենց մասնագիտական-մանկավարժական գործունեության ընթացքում կիրառված նորարարություններից, որն ըստ էության դրական և հուսադրող արդյունք է, սակայն մնացած 38,1 տոկոսը գտնում են, որ դրանք անտեղի են կամ լավագույն դեպքում էական ազդեցություն չունեն: Ըստ մեզ՝ նման պատկերը հետևանք է այն բանի, որ դաստիարակները կիրառում են նորարարություն անգամ այն դեպքում, երբ չունեն համապատասխան տեղեկատվություն և չեն անցել

մասնագիտական վերապատրաստում, որն էլ հանգեցնում է նման իրավիճակի:

Այս հարթությունում առանձնակի է կարևորվում, թե իրականացված կամ ներդրված նորարարություններից ինչ փոփոխություններ են նկատվել երեխաների մոտ: Ստացված արդյունքները պատկերված են 2-րդ տրամագրում:

Առանձնակի պետք է նշել, որ նորարարությունների ներդրման շնորհիվ երեխաներն առավել ակտիվորեն են մասնակցում ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներին և հնարավորինս կատարում տնային առաջադրանքները:



Տրամագիր 2. *Նորարարությունների ներդրման արդյունքում երեխաների մոտ նկատված փոփոխությունները՝ տոկոսներով*

Ակնհայտ է, որ նախադպրոցականների ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ընթացքում դաստիարակների կողմից իրականացված նորարարությունները ֆիզիկական դաստիարակության և կրթության վրա թողել են դրական ազդեցություն, որը հիմք է հանդիսանում շարունակել սկսած գործընթացը:

Սոցիալ–մանկավարժական ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ֆիզիկական դաստիարակության մանկավարժները համոզված էին, որ իրենց մասնագիտական մանկավարժական գործունեության ընթացքում կիրառելով կամ ներդնելով որևէ նորարարություն՝ կունենային այն ձեռքբերումները, որոնք ներկայացված են 3-րդ տրամագրում:



Տրամագիր 3. *Դաստիարակների ակնկալիքները նորարարությունների կիրառման ընթացքում՝ տոկոսներով*

Եվ վերջին հարցի վերլուծության արդյունքում, որն ուղղված էր՝ բացահայտելու այն գործոնները, որոնք խոչընդոտում են նախադպրոցականների ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ընթացքում նորարարությունների ներդրմանը, պարզվեց, որ հիմնականում որպես խանգարող հանգամանք է մարզաբազայի, մարզագույքի բացակայությունը: Մյուս գործոնները բերված են 4-րդ տրամագրում:

Եզրակացություն: Այսպիսով՝ նորարարությունների ներդրումը նշանակալի քայլ է նախադպրոցականների ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների որակի ապահովման գործում, բացի այդ, պայմաններ է ստեղծում՝ բավարարելու երեխաների հետաքրքրությունները: Սակայն, այսօրվա դրությամբ չի կարելի խոսել ֆիզիկական դաստիարակության մանկավարժի մասնագիտական-մանկավարժական գործունեության մեջ նորարարությունների կիրառման արդյունավետության մասին: Միևնույն ժամանակ նրանց մասնագիտական գործունեության ընթացքում նորարարությունների մշակման և կիրառման համար ակնառու են մի շարք հնարավորություններ թե՛ կրթական, և թե՛ շարժողական կարողությունների ձևավորման բաղադրիչներում:



Տրամագիր 4. *Նախադպրոցականների ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ընթացքում նորարարությունների մշակմանը և ներդրմանը խոչընդոտող գործոնները՝ արտահայտված տոկոսներով*

Սակայն, նորարարությունն իր առանձնահատուկ տեղն ունի նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության մանկավարժի մասնագիտական մոդելում և նախադպրոցականների ֆիզկուլտուրային կրթության որակի հիմնական չափանիշներից է: Կրթության հումանիզացման պայմաններում անհրաժեշտ է նորացնել նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության կառուցվածքը, դասավանդման ընթացքը համալրել նորարական մեթոդներով, փոփոխության ենթարկել ֆիզիկական դաստիարակության մանկավարժների մասնագիտական գործունեության որակի չափանիշերը, որին շատ դեպքերում պատրաստ չէ նախադպրոցական պրակտիկան: Անհրաժեշտ են կազմակերպչական և գիտամեթոդական պայմաններ՝ ֆիզիկական դաստիարակության մանկավարժների մասնագիտական կոմպետենցիաների կատարելագործման համար:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Боярская Л. А., Методика и организация физкультурно-оздоровительной работы: учеб. Пособие, Министерство образования и науки России. Федерации, Урал. федер. ун-т. – Екатеринбург : Изд-во Урал. ун-та, 2017. – 120 с.
2. Гавриленко Л.С., Инновационная педагогика: учеб. пособие / Л.С. Гавриленко, В.И. Кутугина, Ю.Л. Лукин. – Красноярск: Сибирский федеральный университет, 2019. – 137 с
3. Гринюк Е. А., Инновации в системе физического воспитания детей дошкольного возраста //Молодой ученый: Международный научный журнал № 50 (392).- 2021.- ст. 516-518.
4. Дичковская И.Н., Инновационные педагогические технологии: учебное пособие - К. : Академвидав, 2014. - 416с.
5. Иноятова А. , Зубайдова Н. , Важность дошкольного образования // Science and Education. 2023.- №12., ст. 546-542 URL: https://cyberleninka.ru/ article/n/ vazhnost-doshkolnogo-obrazovaniya
6. Казакова Е.И. и др. Технологии успешного обучения: учебно- методическое пособие. – СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 2022. – 190 с.
7. Мазуренко О.В., Винокурова Н.В., Современное состояние и перспективы решения проблемы развития физических способностей дошкольников // Мир педагогики и психологии: международный научно-практический журнал. 2021. № 04 (57). Режим доступа: https://scipress.ru/pedagogy/articles/sovremennoe-sostoyanie-i-perspektivy-resheniya-problemy-razvitiya-fizicheskikh-sposobnostej-doshkolnikov.html
8. Малозёмова И. И., Физическое воспитание дошкольников: теоретические и методические основы: учебное пособие для студентов педагогических вузов.- Урал. гос. пед. ун-т. –Екатеринбург.- 2018.- 94 с.
9. Смирнова И. Н., Проектное обучение как фактор инновационных изменений в профессионально-педагогической деятельности //Вестник ЧГПУ им. И.Я. Яковлева. 2012. №3 (75). URL: https://cyberleninka.ru/article/n/proektnoe-obuchenie-kak-faktor-innovatsionnyh-izmeneniy-v-professionalno-pedagogicheskoy-deyatelnosti

10. Трофимова Т.В., Приемы фасилитативных технологий в организации взаимодействия педагогов с родителями //Вестник Донецкого педагогического института № 2 2017 ст. 145-149.

INNOVATIVE APPROACHES IN THE PROCESS OF PHYSICAL EDUCATION OF PRESCHOOLERS

A.G. Stepanyan, S.G. Khachatryan,
Armenian State Institute of Physical Culture
and Sport Yerevan, Armenia.

ABSTRACT

Keywords: Innovations, preschool education, physical education, teacher, physical education classes.

Research relevance: The efficiency of the physical education process for preschoolers largely depends on the targeted development, implementation, assimilation and dissemination of innovations, where a unique role belongs to the physical education teacher, whose professional activity is characterized by initiative, ingenuity, creativity and the desire to make changes in the educational process.

Research aim and problems: The purpose of the research is to study the efficiency of introducing innovations in the process of physical education of preschoolers.

The objectives of the research are to:

1. identify tendencies in the development of innovative technologies in the process of physical education in preschool institutions.
2. identify the attitude of physical education teachers towards the application of innovations in professional activities.

Research methods and organization: The following methods were used in the study:

1. **Theoretical** (analysis of literature on the research topic, study, generalization, analysis, generalization of work experience),
2. **Empirical** (sociological survey, pedagogical observation, conversation).

In order to clarify the attitude of a physical education teacher to the application of innovations in the process of physical education in preschool educational institutions, as

well as to identify factors that hinder the implementation of this process, we carried out a sociological study for which a special questionnaire consisting of 9 questions was prepared. The sociological survey was carried out in 21 state kindergartens in Yerevan and in Abovyan, Kotayk region. A total of 144 teachers took part in the survey with 19 years average teaching experience. None of them had higher physical education.

Conclusion: The introduction of innovations is a significant step in ensuring the quality of physical education classes for preschoolers, and in addition, conditions are created to meet the interests of children. However, today it is impossible to talk about the effectiveness of the application of innovations in the professional and pedagogical activities of a physical education teacher. At the same time, there are a number of opportunities for the development and application of innovations in their professional activities, both in the educational and motor components of skill development.

ИННОВАЦИОННЫЕ ПОДХОДЫ В ПРОЦЕССЕ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ ДОШКОЛЬНИКОВ

А. Г. Степанян, С.Г. Хачатрян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова. Инновации, дошкольное образование, физическое воспитание, педагог, занятия физкультурой.

Актуальность исследования. Эффективность процесса физического воспитания дошкольников во многом зависит от целенаправленной разработки, внедрения, усвоения и распространения инноваций, где уникальная роль принадлежит педагогу по физическому воспитанию, чья профессиональная деятельность характеризуется инициативностью, изобретательностью, творческим подходом и стремлением внести изменения в педагогический процесс.

Цель исследования: исследовать эффективность внедрения инноваций в процесс физического воспитания дошкольников.

Задачи исследования.

1. Определить тенденции развития инновационных технологий в процессе физического воспитания в дошкольных учреждениях.

2. Выявить отношение педагогов физического воспитания к применению инноваций в профессиональной деятельности.

Методы исследования.

1. **Теоретический** (анализ литературы по теме исследования, изучение, анализ, обобщение опыта работы),
2. **Эмпирический** (социологический опрос, педагогическое наблюдение, беседа).

Организация исследования. С целью выяснения отношения педагога по физическому воспитанию к применению инноваций в процессе физического воспитания в дошкольных образовательных учреждениях, а также выявления факторов, препятствующих реализации этого процесса, нами было проведено социологическое исследование, подготовлена специальная анкета, состоящая из 9 вопросов. Социологический опрос проведен в 21 государственном детском саду в Ереване и Абовяне Котайкской области. В опросе приняли участие 144 педагога, педагогический стаж которых в среднем составил 19 лет. Никто из них не имел высшего физкультурного образования.

Краткие выводы. Внедрение инноваций является значительным шагом в обеспечении качества занятий дошкольников по физической культуре, а кроме того, создаются условия для удовлетворения интересов детей. Однако, на сегодняшний день нельзя говорить об эффективности применения инноваций в профессионально-педагогической деятельности воспитателя физического воспитания. В то же время для развития и применения инноваций в их профессиональной деятельности выделяется ряд возможностей как в образовательном, так и в двигательном компонентах формирования способностей.

Տեղեկություններ հեղինակների մասին

Արտակ Գառնիկի Ստեփանյան՝ մ.գ.թ., ՖԴՏՄ և ԱՖԿ ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: artak.stepanyan@sportedu.am, ORCID: 0009-0006-0714-2505

Սաթենիկ Գառնիկի Խաչատրյան՝ մ.գ.թ., ՖԴՏՄ և ԱՖԿ ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: satenik.khachatryan@sportedu.am, ORCID: 0009-0007-7904-9366

Information about the authors

Artak Garnik Stepanyan, PhD, Associate Professor of the Chair of Theory and Methodology of Physical Education and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

E-mail: artak.stepanyan@sportedu.am. ORCID: 0009-0006-0714-2505

Khachatryan Satenik Garnik PhD, Lecturer of the Chair of Theory and Methodology of Physical Education and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

E-mail: satenik.khachatryan@sportedu.am ORCID: 0009-0007-7904-9366

Հոդվածն ընդունվել է 28.01.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 29.01.2025–ին:

Գրախոս՝ դոցենտ Յու. Գրիգորյան